առնելով՝ թէ „Պարտ է Եպիսկոպոսին անարատ լինել“. յամենայն արատոյ՝ որ ըստ հոգւոյ եւ մարմնոյ իցեն՝ մաքուր լինել հրամայէ իբրեւ Աստուծոյ տնտեսի. զի պատուական հոգւոց մարդկան են վերակացուք, եւ ոչ նիւթականացս միայն: Եւ որպէս դէտ աննիրն աչօքն մտաց նայել իվերայ ամենեցուն. զթիւրեալսն ուղղել, եւ զուղիղսն հաստատուն պահել յուղղութեանն: Հեզ, ցած. զխոնարհութիւն ուսուցանէ, զի անդէպ է Եպիսկոպոսին հպարտութեամբ եւ զոռոզութեամբ լինել առ հնազանդեալ ժողովուրդսն, որպէս զգործակալս բռնաւորաց: Պարկեշտ, առ ամենայն շարժումն հոգւոյ եւ մարմնոյ: Հիւրասէր, որպէս զԱբրահամ: Բարեսէր, սիրել զԱստուած եւ զպատուիրանս նորա: Արդար, որպէս արդարքն առաջինք որք վկայեցան յԱստուծոյ: Սուրբ. սուրբ այն է, որ մաքուրն է յամենայն ախտից: Ժուժկալ. ժուժկալութեան սահմանն այս ինչ է, յամենայնէ յորոց օրէնքն Աստուծոյ հրաժարեցուցանեն զմեզ՝ պարտ է ժուժկալ լինել: Մի արծաթասէր, զոր Պօղոս՝ մայր ամենայն չարեաց անուանէ. յայսմանէ ախտէ յառաջանայ յեկեղեցւոջ բազում խառնափնդոր կարգք, անիրաւ դատ, զրկանք, յափշտակութիւն, եւ այլն որ սոցա պատշաճի: Զի Տէրն խարազան առեալ եհան իտաճարէն զայսպիսիս. զորս լիով ուսուցանէ մեզ ընդհանրական խրատն սրբոյն Ներսէսի շնորհալւոյ Հայրապետին մերոյ:

Ը.

Ամենայն եկեղեցական իրաց հոգսն Եպիսկոպոսին է՝ ըստ Առաքելական կանոնաց, եւ նա ունի իշխանութիւն իվերայ ընչից եկեղեցւոյն՝ որպէս իվերայ պատուական հոգւոց մարդկան, եւ վարել պարտի զնոսա իբրեւ Աստուծոյ: Մի լիցի նոցա ազահել ինչ անտի, եւ կամ շռայլօրէն խեղկատակաց եւ այլոց այսպիսեաց զայն շնորհել. բայց եթէ աղքատք իցեն՝ օգնել հրամայեն օրէնքն, եւ կարօտելոց միշտ խնամք ունել: Եւ եթէ ինքեանք պակասութիւն ինչ ունին, լցուցանել անտի, զի մի այլոց կարօտիցին. վասն զի օրէնքն Աստուծոյ հրամայեալ են, որք սեղանոյն պարապեալ են՝ իսեղանոյ անտի կերակրիլ. ըստ որում եւ ոչ զինուորն իւրովք բոշակօք զզէնս պատերազմաց բերէ: Տես իկանոնս Կղեմայ իգլուխն ԼԶ. ԼԸ, ԼԹ. եւ զայլ կանոնս սրբոց Հարց: Եւ իյԱնտիոքայն, գլուխ ԻԴ, ԻԶ. եւ իկանոնս ազգիս Հայոց յատուկ ժողովոց:

Նուաստ Յովսէփ Արքեպիսկոպոս Ռուսաց երկրի ամենայն Հայոց Ազգին, եւ հիմնադիր նորաշէն քաղաքիս Նախիջեւանայ:

(Շարայարութիւն յառաջիկայս.)

ԽՐԱՏԱԿԱՆ ԵՒ ԶՈՒԱՐՃԱԼԻ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

* *Վենետիկի մէջ 1766-ին վճիռ մը եղեր էր չորս փախստական զինուորներու համար որ վիճակ ձգուի անոնցմէ մէկուն վրայ, եւ որուն որ ելնէ վիճակը՝ նա հրացանով ըսպանուի: Զինուորներուն երեքը լռութեամբ կհնազանդին վճռոյն, բայց մէկը յանձն չառնուր վիճակ հանելը. երբոր պատճառը կհարցընեն՝ պատասխան կուտայ թէ «Անոր համար՝ որ կայսրը ինքը սաստիկ արգելք դրած է որ բաղդի խաղեր չխաղացուին»: Թագաւորին ականջը կհասնի զինուորին այնպիսի սրամտութիւնը այն վտանգաւոր ժամանակին, եւ կհրամայէ որ չորսին եւս ազատութիւն տրուի:*

— Պատրաստաբան մարդը այսպէս շատ անգամ իւր կեանքը կաղաստէ իմահուանէ, միայն թէ դիմացիններն ալ պատրաստ լինին հասկընալու:

* *Երբոր Նափոլէոն Պոնափարթը Փարիզու բերդակալ էր, հացին թանկութենէն ժողովուրդը՝ էրիկ մարդ կնիկ մարդ ոտք ելաւ: Նափոլէոն ձին հեծած՝ սկսաւ քաղաքին մէջ քալել որ ժողովուրդը հանգարտի, եւ հացագործներուն առջեւը խռկուած բազմութիւնները ցրուին: Այն բազմութեանց մէջէն հաստ կնիկ մարդուն մէկը անդադար կկանչուրտէր դէպի ձիաւոր զինուորականներուն թէ «Իրենց փորը կուշտ է, այնպէս չէ. խեղճ ժողովուրդը քաղցած թող մեռնի, որուն հոգն է»: Նափոլէոն դարձաւ, «Մարիկ՝ ըսաւ ծիծաղելով. դէրը ով է, ես թէ դուն»: Ամէնքը ծիծաղեցան, եւ պառաւը ուրիշներէն ալ աւելի:*

— Կարծեմ մեր մէջ ալ կգտնուին Նափոլէոնին խօսքն ըսելու իրաւունք ունեցողներ, ինչպէս որ կան պառաւին խօսքն ըսողներ:

digitised by A.R.A.R.@